

قِبْلَةُ

محلية جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

ՏԵՐԵՎԱՆԻ

ՏՐԱԾԵՐԸ ՊՈՒՆԱԿԻ ԳԱՅՔԻ Շ.Բ.Ը ԸՆՄՈՒԹԵԱԾ

مدير المسئول : ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԼ. ՏԱՐԻ ՔԵՒ 10 - 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1975

ԻՐ ՍԱԻՓ ՀՈՅՐԵՆԻՔ

Իմ սուրբ հայրենիք, դու սրբիս մէջ ես,
Դու սրբիս մէջ ես, ոչ լեզուիս վրայ,
Իմ սրբի միջից՝ թէ սիրս նեղին՝
Դրօշիդ բոցը պիսի հուրերայ:

Զեմ ուզում գոռալ իմ սիրոյ մասին,
Սակայն, իմացիր, հայրենիք իմ մեծ,
Քեզ հարիւր տեղով խոցեց քենամին,
Բայց հազար տեղով իմ սիրոք խոցուեց:

Ես ամբողջովին քննեմ, հայրենիք,
Եւ մոմի նման, համբեմիդ վրայ,
Քո փառքի համար թէ մի or վառուեմ,
Մոխրաբիծ անզամ ինձնից չի մնայ:

Հ. Բ. Ը. Մինիթին

Ա. Զ. Դ.

— Տեղեկատուն առ. այժմ կը հրատարակուի պարբերաբար:

— Թղթակցութեանց, գրամական նույներուն, գիրքերուն,
թերթերուն եւ հանդիսներուն առարումները կատարել խմբագրու-
թեան հասցեին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՑՈՒ»ի

15, Էմաս կը Տին փողոց — Դամիրէ
Հեռախոս 919636 — Նամակատուփ 717

Բ Ա Վ. Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

- | | |
|--|--------------|
| 1.- Կոչ Սփիւռքի Հայութեան | Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ |
| 2.- Հարցազրոյց Տոք. Վարդգէս Մկրտիչեանի Հես | Ա. ՄՈՎՈՒՍԵԱՆ |
| 3.- Հ. Բ. Ը. Մ.ի 62րդ Ընդհանուր Ժաղովը | |
| 4.- Ռոբ. Գրիգոր Կիրակոսեանի Յիշատակին | Ա. Մ. |
| 5.- Գրիգոր Կիրակոսեան - Պատիարակ Տնօրինը | Տ. ՊՈՊԻԿԵԱՆ |
| 6.- Տիգրան Պապիկեան Ոչ Եւս Ե | |
| 7.- Բացառիկ Յոքելինական Հանդիսութիւն Մը | |
| 8.- Ե. Խորենակցական Համաժողովը Յետաձգուած | |

النحو الآخر

محلية جمعية القاهرة الخيرية الأرمنية العكامة

ԱՆՊ

-ԳԱՀԻՐԵ-

ՏԵՇԿԱՏՈՒ

ՏՐԱՎԵՐԱՎՈՒԹԻՒՆ ԳԱՅԻՐԸ Հ.Բ.ԷԼՄԻՌՈՒԹԵԱՆ

مدير المسؤول : أ. صاروخان - ١٥ شارع عmad الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

Ճ. ՏԱՐԻ ԹԻՒ 10 - 12

ՀՆԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1975

ԿՈՉ ՍՓԻՒՌԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԵՏԻՆ ԱՌԻԹՈՎ

Հ. Բ. Ը. Միուրեան Կեդրոնական Վարչական ժողովը այսու կուզայ յայտարարելու թէ ձեռնարկած է համագաղութային հանգանակութեամ մը՝ օգնելու համար Լիբանանի մեր աղետեալ եղբայրներուն եւ քոյրերուն:

Եօրանասուն տարիներ առաջ Բարեգործական ծնունդ առաւ ազգային տագնապայի վիճակ մը դարմանելու համար խսկ այսօր, երբ ան կը պատրաստուի Եղեյուս իր հիմնադրութեան եօրանասնամեակը՝ դարձեալ կը գտնուի ազգային տագնապի մը դիմաց,

Ամիսներէ ի վեր Լիբանանէն այս ափերը հասնող լուրերն ու ականատեսի վկայութիւնները կը հաստատեն թէ մեր ամեննեն կազմակերպեալ ու կենսունակ զադութերն մէկը անմեղ զնն է այդ երկրին մէջ մղանող քաղաքացիական տրխուր պատերազմին: Ծանրօրէն տուժած են անհատ Հայեր, ընտանիքներ եւ ազգային կրթական հաստատութիւններ: Մէծ է նաև մահացողներուն ու վիրառեալներուն թիւը:

Լիբանանի Հայութիւնը պէտք ունի անմիջական օժանդակութեան. անոր կորուստները ծանրակշտու են համահայկական իմաստով, որովհետեւ, Լիբանանի Հայութեան հասած որեւէ հարուած՝ հարգու մըն է ամբողջ Հայութեան: Հայ ժո-

դովուրդը ամբողջութիւն մըն է աշխարհի երեսին եւ զի կրնար անխոռով ապրիլ՝ երբ իր մէկ հաստածը վիրասոր է այսօր: Անա թէ ինչու ամբողջ Սփիւրքի առաջնազոյն պարտականութիւնը պէտք է ըլլայ եղբայրական ձեռք երկարել լիբանանահայութեան՝ ամոքելու համար անոր վերերը, քերեցնելու համար կարիքները եւ վերականգնելու համար ազգային-մշակութային մէթենան:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միուրեանը, հաւատարիմ իր առանդական կողումին եւ առաքելութեան, որոշած է հրապարակ զայ եւ բոլոր գաղութերնեն ներա ձեռնարկել հանգստակութեան մը:

Ուրեմն, մօտ օրեն յառուկ յանձնախումբեր պիտի զիմեն մեր ազգայիններուն օժանդակութեան: Վասահ ենք որ այս անգամ ենս մեր Միուրեան կողը պիտի հաօնի մեր զանգուածներու սրտին եւ անոնք ինքնաբուխ նուիրումով մը պիտի սատարեն մարդասիրական եւ ազգասիրական այս անհետաձգելի ձեռնարկին:

Արդ, սրտազին կոչ կ'ուղենք մեր բոլոր ազգակիցներուն որ տան լիաբուռն կերպով եւ խորունկ համոզումով, որպեսզի աւելի ջխորանայ ներկայ ողբերգութիւնը եւ որպիսզի դարմանուին վերքերը եւ խնայուին Հայ կեանքերը:

Դեկտեմբեր 8, 1975 Ա. ՄԱՆՈՒԿԻՆԱՆ
Նախագահ

ՀԱՐՑԱՋՐՈՅՑ

Հ. Բ. Բ. Միութեան Փլխ ՆԱԽՍԴԱՀ
ՏՈՐԹ, ՎԱՐԴԳԵՍ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՀԵՏ

Հ. Բ. Բ. Միութեան Կեղր. Վարչութեան փոխ նախագահ Տորթ. Վարդգես Մկրտիչեանի իր վերջին շրջապոյտին ընթացքին, նաև այցելեց Քահիքի: Այս առքին խմբագրութիւնն նանոյք ունեցաւ զանեկան հարցազրոյց մը ունենալ իրեն նետ, զոր վարեց պարբերաբերիս խմբագիր Պր. Անետիս Մովսեսեան:

ԽՄԲ.

Հարց. — Դուք որպէս Հ. Բ. Բ. Միութեան երկարամեայ զիթերան անդամը և կեղր. վարչութեան փոխ նախագահը՝ ինչպէ՞ս կրնաք բացատրել երթ ըսեն. «Բարեգործականը երէկ և այսօր»:

Պատ. — Բարեգործականը այսօր երիտասարդաց շարժումն իսկ է: Այս կը թարթական գործը կը պատրաստէ երիտասարդութիւնը կեանքի — և կեանքը մշակոյթն է. այսինքն երիտասարդական շարժումը:

Հարց. — Համաձայն էք որ Բարեգործականը ամենամեծ կազմակերպութիւնն է սփիւռքի մէջ և ինչն է պատճառը:

Պատ. — Անկասկած Բարեգործականը մեծագոյն ազգային կազմակերպութիւնն է սփիւռքի մէջ, անբախտատելիութէն:

Հարց. — Կ'ըսեն թէ նոր սերունդը ապագայ սիւները պիտի ըլլան այս մեծ Միութեան. կը խորհիք թէ անոնք պիտի կարենան վառ պահել նոյն խանդավառութեամբ:

Պատ. — Արդէն նոր սերունդը ջանը իր ձեռքին առած է, մանաւանդ Միացեալ նահանգաց մէջ, և կեդրոնական ղեկավարութիւնը կը սպասէ որ ամենուրեք այս իրականութիւն գառնայ, եթէ արդէն իրականութիւն չ'է:

Հարց. — Մեծ ազգային բարեբարներ Պողոս Նուպար փաշա և Ալեք Մանուկեան, ինչո՞վ կը տարբերին իրաբմէ, իբրեւ նըւիրեալ անձնաւորութիւններ սփիւռքի մէջ:

Հ. Բ. Բ. Մ. Ի 62-ՐԴ ԸՆԴ ԺՈՂՈՎԸ

Հ. Բ. Բ. Միութեան 62րդ հնդհանուր ժողովը գումարուեցաւ Շաբաթ, 18 Հոկտեմբեր 1975ին, Առաջնորդաբանի Հ. Ա. Առաջնորդաբան հանդիսաբանին մէջ, նիւ Եորք, ատենապետութեամբ ցկեանս նախագահ Ա. Մանուկեանի և մասնակցութեամբ 111 իրաւասու անդաներու, որոնք

Պատ. — Ազգային նուիրումի տեսակէտէ Պողոս Նուպար փաշա և Ալեք Մանուկեան նոյն մակարդակին վրայ կը գրտնըւին: Բայց, այժմու ժամանակը հիմնականուրէն կը տարբերի Պողոս Նուպարի ժամանակէն: Ալեք Մանուկեան մ'եր ժամանակին մարդն է:

Հարց. — Դուք բազմաթիւ անդամներ առիթը ունեցած էք այցելելու եգիպտոս, որքանո՞վ կը զնահատէք Հ. Բ. Բ. Մ. Ի. կը թական և մշակութային գործունէութիւնը եգիպտոսի մէջ:

Պատ. — Վարժաբանը անձը կը պարաստէ կեանքի վերելքներուն և վայրեցքներուն լի ու լի զիմագրելու: Հ. Բ. Բ. Մ. Ի. մշակութային գործ կը կատարէ՝ այսինքն ան կեանքի հիմնալի ընծաները կուտայ մ'եր համայնքին:

Հարց. — Քանի որ այդքան խանդավառութէ էք երիտասարդութեամբ, ի՞նչ կը թելազրէք նոր սերունդի երիտասարդութեան որպէս պատգամ:

Պատ. — Ես կ'ըսեմ՝ «Ինքզինքնիդ եղէք» (he yourserves): Հին հելլէն փիլիսոփան ըստած է՝ «Ծանիր զքեզ». այս խորապէս փիլիսոփայական խմաստ ունեցող պատգամ է: Ամէն մէկուն մէջ կան մեծամեծ ուժեր, որոնք ամէն անձ պէտք է գտնէ ու գործածէ աղնուութեան, մարդկայնութեան ի հաշիւ: Այդ մէր տոհմային աւանդներուն ճանապարհն է:

Հարց. — Վերջին հարցում. ի՞նչ կ'ուղէք որ ըլլայ Հ. Բ. Բ. Միութիւնը 2000 թուականին:

Պատ. — Քրիստոս ծնած էր 20 գարառաջ, խաչուեցաւ այս բառերը ի շրթին. «Տէր թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն»:

Թող մ'եր երիտասարդութիւնը սովորէ մ'եր քրիստոնէութիւնը լի ու լի արժեցնել:

կը ներկայացնէին 1154 իրաւասու ձայներ։
Ժողովը բացուեցաւ առաւտօտեան ժամը 10.30ին Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Թորգոմ Ա.թք. Մանուկեանի ազօթքով։ Ապա ժողովականները յոտնկայս լրառութեամբ յարգեցին 1975ի ընթացքին մահացած մեր անդամներուն յիշատակը։

Նախագահ Ա. Մանուկեան իր բացման ճամփին մէջ համոյքով ողջունելէ ետք ժողովականները, ըստ թէ 1974ը արժեթվային ներդրումի և նիւթական յանձնանձումի իմաստով ամբողջ արեմաեան աշխարհին համար եղած էր տնտեսապէս կորստարեր շրջան մը։ Սակայն մասնաւոր գոհունակութեամբ յայտնեց թէ 31 Դեկտեմբեր 1974ին Միութեան հիմնագրամիները, նախորդ տարուան բաղդատմամբ, կրած էին 3,112,937 տոլարի յաւելում մը և տոմարական արժեքով բարձրացած 28, 120,367 տոլարի։ Այս աճին չուրջ կէսը արգիւնք էր ներդրումներու մէջ իրականացած արժեսորումի և միւս կէսը նուիրատուութեանց։

Նախագահը յիշեց թէ Միութեան յատկացումները 1974ին նոր մրցանիչ մը հաստատած էին։ Ինդէ ելքը եղած էր 3,431,272 տոլար, որ նախորդ տարուան բաղդատմամբ 585,349 տոլար աւելի էր, և որուն շուրջ 80 առ հարիւրը, այսինքն 2,803,632 տոլար, յատկացուած էր զուտ աղգապահանման նպատակներու։

Ան յիշեց 1974ին բացուած Միութեան գորացներն ու մշակութային կեդրունները, Պուէնոս Այրէսի Մարի Մանուկեան Երկր. Վ.թ.ը., Տիթրոլիթի Ա. Մանուկեան Վարժարանի Երկրորդական բաժինը, Անթլի-իասի նորաշէն Պողոս Գ. Կարմիրեան Վարժարանը, Մոնթէվիտէոյի նուպարեան Վարժարանի նորակառոյց շէնքը, Մարտիլիոյ, Աման Փաւլոյի և Գորտոպայի Մասնաճիւղերուն կեդրունները, Փարիզի Ա. Մանուկեան Մշակութային կեդրունը և այլ շինարարական ձեռնարկներ, որոնց համար յատկացուած էր 858,742 տոլարի խոշոր գումար մը, որ մաս չի կազմեր Միութեան ընդհանուր ելքին։

Նախագահը ժողովականներուն ուշագրաւթեան յանձնեց այն իրողութիւնը,

թէ վերջին քանի մը տարիներուն նման Միութեան 1974ի տարեկան ելեմուտքին մէջ զոյցած էր 31,250 տոլարի բաց մը։ Ան խոր ցաւով անդրագարձաւ կրանանի ներկայ քաղաքական տխուր գեպքերուն և յոյս յայտնեց, թէ Միութեան հետ բովանդակ զաղութահայութիւնը իր եղբայրական օժանդակութիւնը պիտի բերէ Լիբանանի մեր աղէտեալ եղբայրներուն, եթէ գժբախտ տնօրինումով մը ներկայ ողբերգութիւնը շարունակուի։

Նախագահը համառօտակի անդրագարձաւ Միօւթեանի 60ամեակին, Հ.Յ.Բ.Ը. Միութեան 70ամեակին, զոր հանդիսաւորապէս պիտի նշեն մէր անդամներն ու զիտակից ազգայինները ամենաւրէք, և Ամերիկայի Մ. Նահանգաց Անկախութեան 200ամեակին, որ կը զուգագիպի այս օրհնեալ երկրին հայ գաղութին կազմուորման առաջին գարագարձին։

Քնիհ. Տնօրէն Տիար Ա. Հայկենց ներկայացուց Միութեան 1974 տարեցաւ անդրագարձաւի տեղեկագիրը, անդրագարձաւով կեդրունական վարչ. Ժողովի կարգադրութեանց, նոր հիմնագրամներուն, կալուածային-շնարարական և կրթական ձեռնարկներուն շուրջ։ Իսկ կեդր. Վարչ. Ժողովի կանձապահ Տիար Ա.թին Ասլանեան ներկայացնց Միութեան 1974 տարեցաւ ամբողջական պատկերը, զայն բաղդատելով 1973ի թուանշաններուն հետ։

Նախագահին հաւաէքրով Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Թորգոմ Մըրբազն խօսք առնելով նախ իր գոհունակութիւնը յայտնեց, ապա մաղթեց որ նոյն ոգիով տեէ և իր բարիքները սփոէ հայութեան։

Ա. նիստը փակուեցաւ ժամը 12.30ին։ Կէսօրուան ճաշին, ինչպէս նախորդ տարիներուն, ժողովականները նախագահ Ա. Մանուկեանի հիւրը եղան։

Քնիհ. Ժողովի բ. նիստը սկսաւ ժամը 1.30ին։

Գաղտնի քուէարկութեամբ վերընտրուեցան հետեւաները և Միացեալ Նահանգներէն՝ Տոքթ. Վարդգէս Մկրտչեան, Տոքթ. Բերկրուէի Սվաճեան, Տիգրան Մմարես սի և եղուարդ Մարտիկեան։ Ար-

ՈՂԲ. ԳՐԻԳՈՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեծ է կորուստը այն մեծ հայուն՝
Հ. Բ. Բ. Միութեան նախկին ընդհ. Տը-
նօրէն, վաստակաւոր կրթական մշակ և
ծանօթ մտաւորական, Գրիգոր Կիրակոս-
եանի, որ իր մահկանացուն կնքեց անց-
եալ տարի 2 Դեկտ. 1974ին, ինքնաշար-
ժի ընդհարումի մը հետևանքով վուտրու-
թոքի, նիւ Եորք, իր բնակարանին մեր-
ձակայքը:



ՈՂԲ. ԳՐԻԳՈՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Յուղարկաւորութեան արժանավայել
արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ,
7 Դեկտ. 1974ին Ս. Վարդան Մայզը Տա-
ճարին մէջ, և մարմինը ամփոփուեցաւ
Ֆըրնքլիֆ գերեզմանատունը, Հարցուէլ,
նիւ Եորք:

Ան ծնած է Սեբաստիոյ Կամիս գիւ-
ղը, 1885 Յուլիս 12ին: Իր ուսումը ստո-
ցած է Սեբաստիոյ Արամեան Ազգային
Վարժարանը և տեղույն Փէզուիթներու
Գոլէճը, որուն շրջանը աւարտելէ ետք՝
ուսուցչական պաշտօնի կոչուած է Արամ-

տասահմանէն՝ Մուշեղ Ճիերճեան, Արա-
մամքերթէն, Էօժէն Բարազեան և Ռուժէ
Զրբաշեան:

Տեղի ունեցան կարգ մը առաջարկւ-
ներ և թելադրութիւններ:

Հ. Բ. Բ. Մ. ի 62րդ Ընդհանուր Ժողովը
փակուեցաւ Նախագահ Ա. Մանուկեանի
չնորհակալական խօսքով, երեկոյեան ժա-
մը 4ին:

ՏԵՂԵԿԱՑՈՒ

եամ Վարժարանը, 1900ին: 1910էն 1917
կը պաշտօնավարէ Պոլսոյ «Նոր Դպրոց» ի
մէջ: 1919ին Պոլսոյ ուսումնական խոր-
հուրդը զայն Ս. Խաչ վարժարանին Տնօ-
րէն կ'անուանէ: Տարի մը ետք կը հրա-
ժարի իր բոլոր պաշտօններէն, բարձրա-
գոյն ուսում առնելու Փարիզի մէջ: Հոն
1920-22ին միայնգամայն կը հետեւի իրա-
ւաբանական Համալսարանին և Քաղա-
քական և Ընկերային Գիտութեանց վար-
ժարանին: Ան մեծարքէք վկայականներ
ստանալէ ետք, Եգիպտոս Առաջնորդ
Թորգում Արք. Գուշակեանի հրաւերին ըն-
դառաջելով կուգայ Եգիպտոսի և կը ըս-
տանձնէ տեղւոյն Գալուստեան Ազգ.
Վարժարանի տնօրէնութիւնը: Յաջորդ
տարի իրեն կը յանձնուի նաև Հելիոպոլ-
սոյ նորաբաց Նուպարեան Վարժարանի
տնօրէնութիւնը:

1927ին պաշտօնի կը հրաւիրուի իր-
քե Ընդհանուր Տնօրէն կրապոսի Մելքոն-
եան Կրթական Հաստատութեան, զոր կը
վարէ մինչեւ 1936: 1937-38ին Տնօրէն կը
նշանակուի Կալկաթայի Հայոց Մարդա-
սիրական ձեմարանին:

Համաշխարհային Բ. Պատերազմի
պայթումէն ետք՝ 1946ին Հ. Բ. Բ. Մ. ի
կեդր, Վարչութեան կողմէ, պաշտօնի կը
կոչուի Նիւ Եորք, իրեւ օգնական ողբ.
Վահան Մալշզեանի, ապա Ընդհ. Տնօրէն՝
1947 Հոկտեմբերին, մինչեւ իր հանգստ-
եան կոչուիլը 1970ին, Այսպէս ան իր Փի-
ղիքական և իմացական ուժերը կը տրա-
մադրէ Հ. Բ. Բ. Միութեան:

Գր. Կիրակոսեան քաջածանօթ էր
Յիրանսէրէն լեզուի գրականութեան, անդ-
լերէնի, թրքերէնի, գերմանէրէնի և ռու-
սէրէնի: Աշխատակցած է թերթերու և
հանդէսներու, ինչպէս նաև թարգմանած
է շատ մը վէպեր ու պատմուածքեր:

Մեր զգածուած ցաւակցութիւնները
կը յայտնենք ոզբացեալին բոլոր պարա-
գաններուն, մաղթելով երկնային միթա-
րութիւն:

Յարգանք իր անթառամ լիշտակին:
Ա. Մ.

Գրիգոր Կիրակոսեան - Դաստիարակ Տիօրէնը

1922 թուական։ Թրքահայ զանգը-
ւածային տեղահանութեան եւ կոտորածին
կը յաջորդեն հետզետէ Կիլիկիոյ անխոս-
տովանելի պարագումը։ Բնեկորներու վերած-
ւած հայ բազմութիւններ, այրեր, կիներ և
մանաւանդ որբեր, առաստան կը փնտոեն
մերձակայ ափերուն վրայ։

Նեղոսի հովիտը, իր պատմութեան
ող ընթացքին, այնքան ասպնջական չէր
եղած որքան այդ թուականներուն՝ իրենց
պապենական հողերէն զրկուած տարա-
բախտ հայութեան համար։ Օրուան իմաս-
տուն և ծանրախոհ Առաջնորդը, Թորգոմ
եպս։ Գուշակեան, շրջապատուած այս
հնամեայ ու պատուական գաղութին աղ-
նըւագոյն աղգայիններէն, ամէն միջոցի կը
գիմէ եղիպասոսի ապաստանած հայ զան-
գըւածներուն համար տանելի կեանքի մը
պայմանները ստեղծելու, նոյն ատեն շատ
գովելի հեռատեսութիւնները կ'ունենայ գա-
զութին կրթական հաստատութիւնները
օժտելու մտաւորականներու ընտիր փա-
զանքով մը։

Ահա այդ պատմական օրերուն է որ
Գահիրէի միակ աղգային կրթական հաս-
տատութեան, Գալուստեան Վարժարանի
տնօրէնութեան պաշտօնը ստանձնելու կը
հրաւիրուի Գրիգոր Կիրակոսեան, որ կըր-
թական բնուն վաստակէ մը վերջ, Ահ-
քաստիա և Կ. Պոլիս, փութացած էր Փաւ-
րիզ և աւարտած մասնագիտական իր
ուսումը իրաւաբանական ինչպէս և քա-
զաքական և ընկերային գիտութեանց
բարձրագոյն հաստատութիւններէն ներս։

Իր տնօրէնութեան տարինքուն, 1922-
27, Գահիրէի Գալուստեան Ազգ. Վար-
ժարանը կ'ապրի աննախընթաց վերելքի
փայլուն շրջան մը։ Հետզետէ Գահիրէ կը
հրաւիրուին Գարեգին Տիւլիկեան, Արշակ
Ալպյանձեան, Յակոբ Օշական, Բիւզանդ
Կէօզիւառէօյիւքեան, Լիւսն Թաշճեան, Տիկ.
Զարուհի Մագլունի, Ա. Քիրսեան, Ղազա-
րս Ղազարսեան, բոլորն ալ իրենց կըր-
թական վաստակովը արդէն իսկ համբաւի
տիրացած գէմքեր։

Քիչ վերջ, 1924ին, բացումը կը կա-
տարուէր ազգային 2րդ կրթարանի մը,
Նուպարեան Ազգ. Վարժարանին, որ իր
գոները լայնօրէն կը բանար Հելիոպոլոսյ
հայ մանուկներուն առջեւ, չնորիւ Միու-
թեան բազմերախտ հիմագիր երջանկա-
յիշատակ Պօղս նուպարի նուբրատուու-
թեան։ Պր. Կիրակոսեան կը հրաւիրուի
նոյն ատեն վարելու այս վարժարանը ևս։

Գրիգոր Կիրակոսեան եղաւ մին այն
հազուազիւտ տնօրէններէն, որ օժտուած
ուսութանական բազմակողմանի և հաստատ
պաշարով, իմացական բարձր կարողու-
թիւններով ու մանաւանդ հայ գաստիարա-
կի անձնուէր ոգիով և խոր գիտակցու-
թեամբ, յաջողած է նախանձելի մակար-
դակի մը հասցնել մեր գաղութին աղգային
զոյգ վարժարանները և պատուաբեր նա-
խանձախնդրութեամբ մը բարձր պահել
անոնց ուսումնական և գաստիարակչական
առաքելութիւնը։ Տնօրէն մը որ գիտցած
է քաջալերել խոստմնալից աշակերտները
զանոնք առաջնորդելով գէպի բարձրագոյն
յարկերը, օգտակար և լուսամիտ թելակ-
րութիւններով զանազան կրթական ֆոն-
տերը ի սպաս դնել տալով մտաւորական
ընտրանիի մը պատրաստութեան կենսա-
կան պահանջին։

Մինձ է թիւը պատրաստուած և աղ-
գային ծառայութեան այլազան մարզե-
րու նուբրատած այն երիտասարդներուն ո-
րանք Գրիգոր Կիրակոսեանի ձեռնասուննե-
րը ըլլալէ վերջ վայելած են անոր անվե-
րապահ օժմնագկութիւնը, անոր վարակիչ
խանգամառութիւնը, և մանաւանդ անոր
հայկական շինիչ խորհուրդներու քաջալե-
րանքը։

Յարգա՞նք քու բեղմնաւոր վաստակիդ,
սիրելի Տնօրէն։ Տիպար գաստիարակի
թողուցած յիշատակդ անդնջելի պիտի մը-
նայ մեր բոլորին սրտին խորը։

Տիգրան ՊԱՊԻԿԵԱՆ

Գահիրէ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Հինգշաբթի, 25 Սեպտ. 1975ի կէսուրին իր մահկանացուն կնքեց, Հ.Բ.Ռ.Մ.ի վիթերան անդամ, Եղիպատոսի Կեդր. Յանձնաւողովիլ ատենապալիր, Միութեանս Յուզակիմեան Սանուց Յանձնախումբի անդամ և նախկին Տնօրէն Գալուստեան և


Նուպարեան ազգային վարժարաններու Ողբ. Տիգրան Պապիկեան: Ան մահացած է իր բնակարանին մէջ յետ երկարատես հիւռանգութեան, խոր սուզի մատնելով իր ընտանիկան պարագաները և նախկին երկսու ուսանողներ:

Ազգային յուզարկաւորութեան տիսուր արարողութիւնը կատարւեցաւ Շաբաթ, 27 Սեպտ. 1975ին: Թաղման կարգի աւարտին, Գահիրէի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին մէջ գամբանական քարոզմը տուաւ Եղիպատահայոց Առաջ. Տեղապահ Գերպ. Տ. Ներսէն Ծ. Վրդ. Քապութեան: Ապա եկեղեցեւոյ բակին մէջ, ողբացեալին գագաղին առջեւ խօսք առին Պր. Հայկազուն Քիւրքճեան (ի գիմաց Հ.Բ.Ռ.Մ.ի) և Մօ. Եղ. Յակոբեան (ի գիմաց ուսուցչութեան):

Ողբացեալին գագաղը փոխադրուեցաւ Հելիոպոլսոյ Ազգ. Գերբեգմանատունը և ամփոփուեցաւ ընտանիկան շիրիմին մէջ:

Ան ծնած է Պոլիս 1908ին, վասպուրականցի ծնողներէ: Մանուկ հոսակին փոխագուած է Եղիպատոս: Հայեցի գաստիաբակութիւնը բատացած է Գահիրէի Գալուստեան վարժարանին մէջ, զոր փայլուն յաջողութեամբ աւարտած է 1924ին: Տարի մը ֆրանսական Լիսէ յաճախելէ ետք, որպէս Եղիպատեան սան ուզարկուած է Ֆրանսա Մանկավարժական Մասնագիտութեան հետեւու համար:

Ուսուցչուոցի շրջանը լաւագոյն արդիւնքով աւարտելէ ետք, կը հետեւի գիտական ճիւղերու եւս: Ութ տարի մասնագիտական ուսում ամբարելէ ետք կը վերագանայ Գահիրէ և իր ամբողջ կեանքը կը նուիրէ հայ պատանին գաստիաբակման զործին: 1933-1961 կը պաշտօնավարէ Գալուստեան Ազգ. Վարժ. մէջ իրեւ ուսուցիչ ապա տնօրէն: Ան պատ-



ՕՂ.Բ. ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ

Հ. Ա. Բ. Ռ. Մ. - ՆՈՐ ՊԱՐՏԷԶԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Կիւրակի, 16 Նոյեմբեր 1975, կեսօրին Հ. Ա. Բ. Ռ. Մ.-Նորպարի մէջ տեղի ունեցաւ բացումը նոր պարտէզին, հովանաւորութեամբ ակումբին նույրեաւ անդամներէն Տեր և Տիկ. Միհան և Շաք Նեսիմի: Այս առիւ պարտասուած էր համելոց ձաշեր ու անուշեղիներ, ակումբին Տիկնանց Յանձնախումբին կողմէն: Այսպիս, խորպան հողով դարձաւ զեղատեսիլ պարտէզի, որը կը պարտին օրուան հովանաւորոյ ամոլին:

Կը շնորհաւորենի Հ. Ա. Բ. Ռ. Մ.-Նորպարի Վարչութիւնը, Տիկնանց Յանձնախումբը, մադրեղով նորանոր յաջողութիւններ:

ԵՐԱՋԾՈՎԱՆ

ԲԱՑԱՌԻԿ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Փառաշուր հանգիսութեամբ նշուեցաւ եղիպտահայ Թաթուլ Ալթունեան երգչախումբի 20ամեակը և անոր հիմնադիր՝ Մօ. Եղուարդ Յակոբեանի երաժշտական, խմբավարական և այլ բեղուն գործունէութեան, աւելի քան 35ամեայ վաստակը։ Հանգիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի։ 7 Դեկտ. 1975ին երեկոյան, Սովետական

բաստած է գիտութեան, թուաբանութեան և աշխարհագրութեան գաստագիրքեր նախակրթաբանի համար։

1961ին կը ստանձնէ Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգ. Վրժ.ի Տնօրէնութիւնը, զոր կը վարէ մինչև 1973, իր հանգստեան թուականը։

Ան ծառայած է աղջին որպէս անդամ Թեմական Ժողովի (1967-71) ինչպէս նաև Ուսումնական Խորհուրդի և Եղիայեան Սանուց Յանձնախումբի։ Ողբացեալ վեթերան անդամ Տ. Պապիկեան օգտակար հանգիստացած է աղջին Հ.Բ.Բ.Մ.ի խողովակով և 1964էն մինչեւ իր մահը անդամակցելով Եղիպտոսի Կեդր. Յանձնադուզվին Ատենապղիրի հանգամանքով և որպէս անդամ Յովակիմեան Սանուց Յանձնախումբի։

Գահիրէի Ազգ. Իշխանութիւնը գնահատելով ողբ. վաստակաւոր գաստիարակ Տ. Պապիկեանի բազմամեայ աղջօգուտ ծառայութիւնը, 1974 Մայիսին հրապարակային հանգիսութեամբ մը արժանաւորապէս տօնեց իր 40ամեայ պաշտօնավարութեան Յորելեանը։

Հանգուցեալ Տ. Պապիկեան սիրուած ու յարգուած անձնաւորութիւն մըն էր գաղութիս մէջ։ Իր անհետացումով Հ.Բ.Բ. Մլութեան շրջանակը և եղիպտահայութիւնը կը կրոսեցնեն ժրաշան և նուիրեալ անդամ մը։

Այս տիտուր առթիւ խմբագրութիւնս իր զգածուած ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին այրիին, զաւակներուն և եղբայրներուն, ինչպէս նաև սգակիր բոլոր պարագաներուն։

Մշակութային Կեդրանի «Զայքովսքի» Հանգիստաբանին մէջ։

Յորելինական սոյն ձեռնարկը նախաձենուած և կազմակերպուած էր Գահիրէի Հայ Մշակութային Արմիններու կողմէ, որուն հովանաւորութիւնը կը վայելէր անուանի երգահան Արամ Ալաշտառուեանի։ Նաև պատուոյ նախագահութեամբ Եղիպտահայ Յարանուանութեանց Հոգեւոր Պետերուն, իսկ հանգիսութեան Նախագահն էր Պր. Աւետիս Զավըճեան։

Հեռնարկին առաջին մասին մէջ տեղի ունեցաւ Հանգիստառ Նիստ, որուն ընթացքին խօսք առին Յորելինական Յանձնախումբի Նախագահուէի՝ Տիկ. Շաքէ Իփէքեան, Ատենապետ՝ Պր. Սարգիս Սարգսեան, մատաւրական Պր. Տիգրան Գէռոգեան և Թեմիս Առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Ներսէն Ծ. Վրժ. Բապուճեան, որոնք վեր առին Մօ. Եղուարդ Յակոբեանի կատարած արժէքաւոր գերը հայ երգարաւեստի մարզին մէջ։

Երկրորդ մասը երգահանքս մըն էր հայկական գեղեցիկ երգերու, զեկավարութեամբ Մօ. Յակոբեանի, զաշնամուրի ընկերակցութեամբ Տիկ. Շամիրամ Գարմանեանի և մասնակցութեամբ 42 երկսեռ անձերու։ Բացադիկ էր ներկայացուած երգերու յայտագիրը, որոնք մեծամասնութեամբ մշակուած կամ յօրինուած էին Մօ. Յակոբեանի կողմէ։ Հիւցումով ուխոր հրճուանքով կ'ունինդրէինք բոլորս ալ, փաստ՝ հանգիստականներու բուռն ծափերուն ընդառաջելով կարգ մը երգերուն կրկնուիլը։

Խօսք առաւ նաև երգչախումբի հին անդամներէն Պր. Շաւարչ Գարանֆիլիկան և վերջին խօսովն էր Մօ. Եղ. Յակոբեան, որ յայտնեց իր անկեղծ արտայայտութիւնները։ Երգչախումբի բոլոր անդամներուն յուշանուէրներու բաշխումով վերջ գտաւ սոյն երաժշտական անդախընթաց հանգիսութիւնը։

Երբմօրէն կը չորսաւորենք Եղիպ-

Տիւր ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ 50,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԵՏԵԱՆԵՐՈՒԽՆ

Պատօնական յայտարարութեամբ ծանուցուած է արդէն թէ Հայաստանի այս Առամշական Եկեղեցւոյ Արեւելեան և Արեւմտեան թեմերը, զործակցաբար Հայկական Բարեզործական Ընդհանուր Միութեան, մօս օրէն պիտի ձեռնարկեն ժողովրդային հանգանակութեան մը՝ օգնութիւն փուրացնելու Լիբանանի աղէտեալ Հայ գաղութին:

Միացեալ հանգանակութեան ա-

ռաջին խոկ ժողովին Հ. Բ. Բ. Միութեան ցկեանս նախագահ եւ ազգային Բարեւրար Տիւր Ալեք Մանուկեան արշաւը բացուած յայտարարեց իր կողմէ նուիրելով 50,000 տոլար:

Հանգանակութեան նպատակն է կէս միլիոն տոլար գոյացնել Միացեալ Նահանգներէն ու Քանատայէն եր 100,000 տոլար ալ տարբեր գաղութներէ:

Զ Ե Կ Ո Յ Ց Ց

Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ Ե. ԽՈՐՃՈՂԱԿՑԱՎԱՆ ՀԱՍԱՁՈՂՈՎԸ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Այսու կը հաղորդենք ի գիտութիւն, որ Հ. Բ. Բ. Միութեան Ե. Համաշխարհային Պատգամառորական Խորհրդակցական ժողովն ու Հ. Բ. Բ. Ընկերակցութեան Թ. Նաւասարդեան Փառատօնը, որոնք տեղի պիտի ունենային 1976ի Ս. Զատկի շաբթիան ընթացքին Պեյրուրի մէջ, Լիբանան, յետաձգուած էն:

Դժբախտաբար, հակառակ մէր յոյսերուն են ակնկալութեանց, վերջին ամիսներուն սաստկացաւ լիբանանեան տագնապը: Զինեալ բախումներ, սպաննութիւններ են աւերածութիւններ ուստեղծեցին անապահովութեան ծանր մընուրտ մը, որ հաշմեց երեւնապէս բարօր Լիբանանը, անոր բո-

լոր գաղութներուն են նաեւ հայութեան անհատական-ընկերային են ազգային-մշակութային կեանքը:

Լիբանանի մեր եղբայրներուն են բոյրերուն վիճակը կը կարօտի մեր բոյրին զգայուն ուշագրութեան են փուրեռանին աշակցութեան: Այս պատճառաւ Կեդր. Վարչ. Ժողովը իր վերջին նիստին որոշեց անորոշ ժամանակաւ յետաձգել Ե. Խորհրդակցական Համաժողովն ու Թ. Նաւասարդեան Փառատօնը:

ԴիմԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎ.Ի

Նիս Եորբ, Ն. Ե.

Դեկտեմբեր 8, 1975

Հ. Բ. Բ. Մ. - Գ. Ա. Հ. Ի. Ր. Ե

Հ. Բ. Բ. Մ. Ի ՀԻՄՆԱՊՈՂԻԹԵԱՆ

Դ Օ Շ Ա Մ Ե Ա Կ

Ա. ԶԵՄՆԱՐԻ

Ճ Ա Շ Կ Ե Բ Ո Յ Ց Թ

Յարաք, 13 Մարտ 1976, Երեւոյեան

Հ. Ա. Ը. Մ. - ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Մշանքամասնութիւնները Յաջորդին

Հ. Բ. Ը. Միութեան ՄԱՄՈՒԼԸ

ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻՒՆ

Պատմաբերք Հ. Բ. Ը. Միութեան
Հիմնադիր՝ Պողոս Փառա Նուպար

HOOSHARAR - Անգլերէն Հրատարակութիւն
Հասցե. — Armenian General Benevolent Union
628, Second Avenue
New - York N. Y. 10016.

ԽՕՍՆԱԿ

Պատմաբերք Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի
Երշանակային Յանձնաժողովի
Հասցե. — Նամակատուի 715, Պէյրուք.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրատարակութիւն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան
Հասցե. — 15, Էման էլ Տին Վողոց — Գահիրէ
Փուտարկդ 717

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի
Երշանակային Կեդրոնական Յանձնաժողովի
Հասցե. — 118, Rue De Courcelles Paris 17^{me} FRANCE

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵՒՆ - ԳԱՅԻՐԵ

Գահիքի Հ. Բ. Բ. Միութիւնը հանոյրն ունի տեղեկացնելու պատուաթան հանրութեան թէ, իբ նիմնած

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ

զրադարանը որ կը գործէ 1958-ին ի վեր, իր տրամադրութեան տակ ունի զրական, պատմական, գեղարուեստական, կրօնական և բանասիրական, ինչպես նաև ՀԱՅԱՍՏԱՆԻ ներկայի գիրքերու նոյն հաւաքածոյ, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները են Գանձիրեկի հայութիւնը անխոտիր, առանց որեւէ վնարումի:

ԳԱՐԳՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒՆ պիարովի Տ

Ննորհակալութեամբ կ'ընդունինք նույրատուութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի նոխ եւ շահեկան ընծալելու համար :

— Ասանալու համար դիմել խմբագրութեանս,
15, Էմաս Էլ Տին փողոց Ա. յարկ — Գանիրէ

Ասորագրեալս՝
կը նուիրեմ Ե. Դ. ()
«Տեղեկատու»ի Գոնիսին:

Usnruqrmiphis



الپیغمبر مسیح اور نبی موسیٰ

رقم الإيداع بدار الكتب ٦١٣

Տպ. «ԱՐԳՈՍ» ԳԱՅԻՐԵ - Հեռ. 56864

~~Spec., n.~~